



ԽՐԻՄՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿԱՆԻԻՑ

Խրիմյան Հայրիկը որպես ուսուցիչ, եկեղեցական, մեծ ու հայրենասեր գործիչ, Վասպուրականի Վարազա և Մուշի Ս. Կարապետ վանքերի վանահայր, «Արծիվ Վասպուրականի» խմբագիր, Տարոնի առաջնորդ, Կ. Պոլսի հայոց պատրիարք, Ազգային ժողովի, Կրոնական ժողովի ատենապետ և ապա կաթողիկոս Ամենայն Հայոց, իր ողջ գործունեության ընթացքում հետաքրքրվել է նաև գրական-մշակութային բազում հարցերով:

Նա թողել է հարուստ գրական ժառանգություն, որի արժեքը նրա համահայկական հնչեղության մեջ է: Նրա երկերը հանդիսացել են իր ապրած ժամանակաշրջանի արձագանքները և արտահայտում են Խրիմյան եկեղեցականի, մտածողի, հայրենասերի և փիլիսոփայի հայացքները հայության կյանքի ու հատարականության տարբեր երևույթների մասին:

Նա մեծ ուշադրությամբ հետևել է հայ գրականության զարգացման ընթացքին, նամակներով կապ է պահպանել մշակութային բազմաթիվ գործիչների հետ և իր վերաբերմունքն է արտահայտել նրանց ըստեղծագործությունների նկատմամբ: Ստորև ներկայացվող մի քանի նամակները ցույց են տալիս Խրիմյան Հայրիկի հետաքրքրությունները մանավանդ թարգմանական գրականության նկատմամբ, եվրոպական գրականությունից թարգմանվելիք նյութի ընտրության հարցում: Ի՞նչ թարգմանել և ինչպե՞ս թարգմանել, որ այդ երկերը կա-

րողանային հարստացնել այն ժամանակվա հայոց «աղքատիկ» գրական անդաստանը: Այդ հարցերին է պատասխանում Խրիմյանը Հյուգոյի թարգմանչին՝ Գրիգոր Չիլինկիրյանին, և Եվգենե Օտյանին ուղղված նամակներում (№ 1 և № 5): Առաջին նամակում նա իր վերաբերմունքը արտահայտելով ֆրանսիական գրականության ու մանտիկական ուղղության մեծ հեղինակի՝ Վիկտոր Հյուգոյի «Թշվառներ» վեպի վերաբերյալ, Խրիմյանը միաժամանակ դրսևորում է առաջադիմական, դեմոկրատական հայացքներ: Համեմատության եզրեր որոնելով իր և Հյուգոյի միջև, Խրիմյանը իրեն էլ համարում է ազատության զինվոր և կանգնում՝ իր ժամանակվա առաջադեմ մտածողների շարքում:

Հետաքրքրություն են ներկայացնում Խրիմյան Հայրիկի նամակները Երուսաղեմի միաբանության անդամներին ուղղված՝ «Սիոն» ամսագիրը նորից հրատարակելու հորդորով (№ 2, 3, 4): Առանձնապես հետաքրքրությամբ է ընթերցվում № 4 նամակը, ուր արտահայտված են Ամենայն Հայոց կաթողիկոսի մտահոգությունները «Սիոն» և «Յոյս» ամսագրերը վերստին հրատարակելու համար: Այդ նամակները ցույց են տալիս նաև ալեգարդ Հայրապետի գրական անուրանալի ձիրքն ու նուրբ հումորը:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

№ 1

Անթվական¹Խրիմյանն առ թարգմանն Հյուկոյի
սրտավիշտ հառաչանաց.²

Հյուկոյի վշտական պատկերը հայացի ճարտարարվեստ գրչով ի նկար հանելով կոնես ի տեսարան հայ ժողովրդին, զուգակշռելով, թե Խրիմյան ևս նույն նմանավիշտ աղետներուն բաժանորդ եղած է: Բայց ո՞վ էմ ես, ո՞վ է Հյուկոն. մի համեմատեր: Նորա անուն տարբեր, իմ անուն տարբեր, նորա հայրենիք մեծ Ֆրանսան է և իմը՝ փոքրիկ Հայաստան. նա ազատության ծնունդ, ես՝ ստրկության, նա քաղաքական աշխարհին ազատության զինվոր, ես՝ Ավետարանին խոնարհ պաշտոնյա:

Նա հանճարով ծով է, ես՝ անձուկ լճակ մի եմ. նորա վիշտերը յուր համար արկած են, այլ իմ վիշտերս պարտիք են. այսպես մեր վիճակ ու կյանք բոլորովին զանազան է: Բայց համաշխարհային ընկերության մեջ զինավորակից ենք իրարու: Եթե նորա դրոշակ լույս և ազատություն կկրե, ես էլ այդ դրոշակին սիրահար եմ:

Մեծն Հյուկոն տիեզերքին բանաստեղծն է: Նորա բարձրաթռիչ ոգվույն առաջ երկնից անհունություն և երկրիս ընդարձակություն իբրև ասպարեզ կբացվի, որո վերա կշրջի և կդիտե այդ ազատ հանճարը ու կճառե հիացյալ, այլ ես իմ փոքրիկ աշխարհին, փոքրիկ ժողովրդին փոքրիկ չաշուղն եմ: Իմ երգերուս ասպարեզը հայրենյաց հին ու նոր ավերակներն են, որոց վերա մերթ ձայնով, մերթ լռելյայն կողբամ անմխիթար: Հյուկոն երջանիկ է. նորա վսեմ ճակատին

¹ Նամակն անթվական է, սակայն բովանդակության մեջ ակնարկում է իր պատրիարքության շրջանը՝ 1869 թ. սեպտեմբեր—1873 թ. օգոստոս: Նամակն ըստ երևույթին գրված է պատրիարքությունից հրաժարվելուց հետո:

² Հյուկոյի առաջին հայ թարգմանիչը արևմտահայ գրող, հասարակական գործիչ, Զմյուռնիայի «Ծաղիկ» հանդեսի խմբագիր Գրիգոր Զիլինկիրյանն է, որը ձեռնարկեց «Թշվառներ» վեպի հրատարակությանը հանդեսի էջերում: Դրա համար «Ծաղիկ»-ը փակվեց: Ամբողջական հրատարակությանը Գ. Զիլինկիրյանը ձեռնամուխ եղավ 1867—1868 թթ: 1868 թ. Տետեյան տպարանում սկսում է տպագրվել «Թշվառներ» վեպի թարգմանությունը 10 հատորով: Արևմտահայ իրականության մեջ «Թշվառներ»-ը Գ. Զիլինկիրյանի թարգմանությամբ հետագայում ունենում է ևս երեք հրատարակություն. 1885 թ.՝ չորս հատորով, 1908 թ.՝ երկու հատորով, և 1922 թ.՝ երկու հատորով:

վերա Ֆրանսայի ազատության աստղ կփայլի պայծառ: Իսկ իմ գլուխ և ճակատ ստվերամած է և ձեռքիս մեջ կշռափեմ Հայաստանի խավարը: Իմ հայրենյացս որդիք զիս Արծիվ ասացին. ես բարձրեն ի վերուստ կտեսնամ հայրենյացս ցիրուցան բեկորները, ուր խավարը կտիրապետե: Ո՛հ, որչափ դժվարին է մոլորին դեմ կռվել, լույսին ճառագայթով զանի փարատել, լույսին գեթ փոքրիկ նշույլ մի տարածելու պաշտոնն ստանձնած եմ, այս է իմ կոշումս. լույս կաղաղակեմ միշտ, զի գիտեմ, թե լույս է միայն փրկություն: Բայց ամենայն ոք հույս կակնկալե հինգեն: Լույսին զորությունը մարդուս ապիկար կարողո՞ղջան հետ կշփոթեն և իմ աղաղակս խոռվելով կխոռվեն: Ահավասիկ այս աղաղակը իմ դատապարտությունս եղած է և առ այս թե՛ գանգատիմ, թե՛ վշտանամ, թե՛ զայրանամ, դարձյալ ինձ համբերել պարտիք է: Ավետարանին և Հյուկոյի խոսքերը ինձ սիփանք կհամարիմ: Ես լավ կհասկնամ նորա վշտագին մրմունջը, զի ոգին ոգվույն և սիրտ արտին հետը գիտե խոսիլ: Ավետարանին պաշտոնյա գոլով կնգնիմ արդարության և ճշմարտության նահատակ լինել: Ավետարանին սեր, ժողովրդին սեր զիս ի սպանդ կվարե. սորա համար թշնամիներս կսիրեմ սրտով. թող նոքա ատեն. ի վերջո սեր կհաղթահարե:

Կասես, թե քույր Հյուկոն միապետության թշնամի է. և միթե Խրիմյանը ինքիշխանության դեմ զինող հակառակ չէ՞: Ես ընդհանուրին և ժողովրդին օգտակար օրենքը գլխույս վերա բարձրությամբ կհարգեմ, այլ փորձառական ճշմարտությամբ վերահասու լինելով թերի օրենքը հավիտյան պաշտել չեմ ուզեր: Վերաքննություն³

³ Վերաքննությունն ասելով Խրիմյանը նկատի ունի Ազգային Սահմանադրության վերաքննության համար մղվող պայքարը, որը Խրիմյանի պատրիարքության շրջանում ստացավ խիստ ընդգծված դեմոկրատական երանգ: Ըստ Ազգային Սահմանադրության՝ Ազգային Ժողովի 140 երեսփոխաններից 70-ը պետք է լինեին Կ. Պոլսի հայության, մյուս 70-ը՝ երկու միլիոնից ավելի ողջ արևմտահայության՝ «գավառահայության» ներկայացուցիչները: Այդ թիվը հետո հասցվեց 40-ի, ապա վերստին նվազեց: Մինչ Խրիմյանը, Ազգային Ժողովում տոն տվողը Կ. Պոլսի և ծովամերձ քաղաքների էֆենդիների դասն էր: Խրիմյանը ցանկանում էր Սահմանադրության վերաքննությունը տանել այնպիսի հոգով, որով հնարավոր լիներ Ազգային Ժողովի երեսփոխանների գերակշռող տարրը դարձնել գավառի արհեստավորության և ժողովրդական խավերի ներկայացուցիչներին, որոնց

աղաղակեցի և արժանացա իջա. Սահմանադրության սուր նախանձավորները մատ դրին հոս ու մրտեցին. խնդիրը շատ պարզ էր, խառնակեցին այլաբանեցին, անչափապես զրաբանեցին, ընդփույթ խոսեցան ու դատեցին, թե Խրիմյանը Սահմանադրությունը չի վերաբններ, այլ իսպառ կեղծանե և այլն:

Տար իմ այս նվազ ձայն, Հյուկոյին, ո՛վ թարգման, և ասա, ես Պիեմվնու եպիսկոպոսն⁴ չեմ, այլ նորա աշակերտակիցն եմ. շատ էր ինձ, թե յուր նկարած լուսափայլ պատկերին ստվեր լինեի, միայն կպարծիմ, թե սրտի գորով ունիմ և նորա չափ ես էլ հայ ժալ Վանժաններ⁵ հոգացի և այնչափ, որ ես էլ մի կարոտ ժալ Վանժան դարձա: Ասա նաև Հյուկոյին, ես նորա մեն մին պարբերական հառաչանաց արձագանքն պիտի տամ, զուգակշռելով, թե ես ալ մի վշտահար ոգի եմ:

Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև ԳԱԹ), Մ. Խրիմյանի ֆ., II բ. գ. 3, բնագիր:

№ 2

Մարտի 9, 1899 թ.

Գերապատիվ Տեր Գևորգ եպիսկոպոս Երեցյան⁶, լծակից եղբայր ի Քրիստոս.

Հիշո՞ւմ եք արդյոք, թե որչափ խոսեցի Ձեզ դադարված «Սիոն»⁷ վերստին հրատարակության մասին և խիստ կերպով պատվեր տալով Ձեզ հանձնարարեցի, որ

վրա հենվելով կարողանար իրագործել իր մտահղացումները, Ազգային ժողովի քննարկման առարկան դարձնել գաղափարական հարստահարությունների խնդիրը: Հարցի քննարկումը ձգձգվեց: Խրիմյանի թշնամիները՝ Էֆենդիների ներկայացուցիչները, մեղադրեցին նրան հակաասահմանադրական լինելու մեջ, և պատրիարքը ստիպված հրաժարական ներկայացրեց, այդպես էլ չիրականացնելով Սահմանադրության վերաբննությունը:

⁴ Պիեմվնու եպիսկոպոս—«Թշվառներ»-ի տիպար հերոսներից մեկը:

⁵ Ժան Վալժան—«Թշվառներ»-ի գլխավոր հերոսն է, Խրիմյանը սխալմամբ գրում է ժալ Վանժան:

⁶ Գևորգ եպիսկոպոս Երեցյան—Երուսաղեմի Միաբանության անդամ:

⁷ «Սիոն» ամսագիր, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի պաշտոնական առաջին հրատարակությունն է: 1927 թվականին, Եղիշե Դուրյան պատրիարքի օրով խմբագրապետությամբ Բաբգեն եպիսկոպոս Կյուլեսերյանի, սկսվեց «Սիոն»-ի նոր շրջանի հրատարակությունը:

երթալուն պես Ձեր առաջին գործ այդ պետք է լինի: Ես ամենայն հույսով սպասում էի, որ առաջարկություն ընդունելություն գտնար, որ Ս. Հակոբյանց Աթոռին տակ և Միաբանական եղբարց գրասիրության և աշխատության փառքն էր, թողում այս մեծ հոգեկան օգուտ, որ ընծայում էր շրջակա ժողովրդին և մանավանդ Կիլիկիո մութ աշխարհին:

Այլ ավա՛ղ, մեր այս առաջարկություն, թեթև կամ անօգուտ ինչ համարելով, ես պատասխան ստացա, թե ոչ կարեմք և այլ անտեղի պատճառներ հառաջ բերելով: Դուք ես գուցե ասացիք, Հայրիկն է, բան մի ասաց և կմոռնա: Այո՛, ես շատ բան կմոռնամ, բայց իմ ցանկալի Երուսաղեմի համար բան մի չեմ մոռնար և դուք և Միաբանություն չեք վկայեր, որ այսպես է:

Ես դյուրություն ես տվի «Սիոն»-ի հրատարակության համար, հարյուր և գուցե ավելի ես բաժանորդագին վճարել խոստացա: Եվ գիտեք դուք Ռուսիո հայ ժողովրդին սիրտ դեպի Ս. Երուսաղեմ վառ և ջերմեռանդ պահելու առ ուխտագնացության որչափ պիտի օժանդակեր «Սիոն»-ի հրատարակություն: Այն գեղեցիկ յետաքրքիր հոդվածներ, որ Երուսաղեմեն գրում են Պոլսո լրագրներուն, ինչու պիտի «Սիոն»-ի մեջ չհրատարակվեր. միթե չգիտեք դուք, թե Ավետյաց երկիր և Ս. Հակոբյանց հարուստ մատենի թանգարան որչափ գրելու նյութեր կընծայեն և կա՞րող եք ասել, թե գրողներ կպակսին:

Բայց ինչպես Էջմիածնա Միաբանություն բերան բացած կտակներու սպասում է և չի կամենում շահագործել յուր անչափ հողաչին և անտառային կալվածքները, նույնպես և Ս. Հակոբյանց Միաբանություն տոգորված է միշտ ուխտավորաց նվերին սպասել: Բայց չեմ ժխտեր, որ այս բանը վերջի տարիներում զգացած են, թե ներկա Տեր Հարություն սրբազան⁸ և յուր համամիտ մի քանի տնտեսող միաբան եղբայրներ, որ աջակից լինելով բավական կալվածական շինություններ հառաջ բերին: Գիտեմ քաջ և փորձով տեսած եմ, որ Ս. Հակոբյա Միաբանություն սահմանված է Հայոց բաժնին Սուրբ Տեղաց պաշտպան լինել իբրև հրեշտակ և ամենայն անձնվիրությամբ ծառայել, քայց գիտեք, ժամանակիս հայեր այդչափով գոհ չեն լինիր, այլ սպասում են, որ գրական աշխատությամբ ժո-

⁸ Տեր Հարություն սրբազան—ակնարկում է Հարություն Վեհապետյան եպիսկոպոսին, սկզբում Կ. Պոլսո, ապա Երուսաղեմի հայոց պատրիարք:

ղովրդի լուսավորության և չափով մի ծառայություն մատուցանեն:

Այսչափ գրելեն հետո ես համոզված եմ, որ դարձյալ բացասական պատասխան պիտի ստանամ և դուք անհաջողության պատճառ և հանցանք սրբազան Պատրիարքին վերա պիտի բարդեք, ուստի ես մի միջոց մտածեցի որով կհուսամ, որ սրբազան Պատրիարք գոնե հակամայից պիտի զիջանի բարկանալով և հաշիռելով, այդ ես չեմ լսում, հեռու եմ:

Բաքուն ստացա ս. Ծատուրյանի տարեկան նվեր 4500 ռուբլի, չորս հազար հինգ հարյուր ռուբլի: Ահա հազար երկու հարյուր հիսուն ռուբլի ուղարկում եմ Ձեզ, որ շուտով հանեք Երուսաղեմ, իսկ հազար ռուբլի իբրև գրավ պիտի պահեմ մինչև այն օրն, երբ «Սիոն»ի առաջին թերթ ձեռքս կհասնի, հայն ժամ այդ գումարին տոկոսն ևս պիտի վճարեմ: Մենակ այս չէ. որիշ գումարներն ևս գրավի տակ պիտի առնեմ: Նամակիս պատճեն հանելով դրկեցեք Տեր Սահակ եպիսկոպոսին և դուք ևս ինչ կուզեք, զայն գրեցեք:

Աղոթակից՝ (չի ստորագրված)

Գ.ԱԹ, Խրիմյան ֆ. I ք., գ. 9, բնագիր:

№ 3

Անթվական

Գերապատիվ Տեր Գևորգ սրբազան, սիրելի եղբայր.

Ծատ և շատ վաղուց եղավ, որ չեք բարեհաճեր գոնե հարցնել Հայրիկի ողջութենեն և նույնիսկ Ձեր առողջութենեն գրել: Ձեմ մեղադրեք Ձեզ, զի ժամ ու ժամանակ չունեք, զի Ձեր մեծ զբաղմունք եղած է պատարագ, պատարագ, հանդես, հանդես և միանգամայն մեռելաթաղություն, մոռնալով զկենդանին: Այդ բան Պոլսո եկեղեցական հարց մի սովորական ուխտն է: Երբեմն խեղճ Հայրիկն ևս այդ ուխտեն բռնված էր. երբ լսում էինք մի հարուստի մահ, կասեինք ուրեմն մենք պետք է ապրենք: Մահը որչափ ընտանյաց համար սուգ էր, մեզ համար ուրախություն էր, զի նոցա մեռելություն մեզ համար կենդանություն և շահ համարում էր:

Գիտեմ, կամաչես թուղթ գրել, դու լռել կուզես վասն «Սիոն»ին, բայց ես ոչ կարեմ լռել: Վրույրի ձեռքով կողմնակի կերպով դուք և Երուսաղեմացիք ինձ պատասխան կուտաք, պատճառաբանելով, թե ահա «Յոյս»⁹ ևս դադրած կամ մեռած է:

⁹ «Յոյս», ամսագիր «ազգային կրոնական, բա-

վրույրի հոդված կարդալեն հետո, պատրիարքի հոդված ևս կարդացի, որ գրում է «Սիոն»ին և «Յոյս»ին համար: Լսեցեք ուրեմն, թող գրեն նոքա. մեք մեր բանը գիտեմք: Ծատ իրավունք ունինք այսպես կարծել և ասել՝ մեք մեր բանը գիտեմք: Լրագրաց ձայն մեր ականջին թմբուկի ձայն է. մեք սովորած ենք. այնչափ դատափետնեցին զմեզ, որ մեք հոգով և մարմնով անզգայացած ենք, այլևս մեք ցավ չենք զգար: Այդպես է. բայց գիտեք, թե վախճանն ուր կերթա: Եվ դուք իբրև ուսյալ և պատվական հարգելի եկեղեցական, կարող եք գուշակել, թե վախճանն ողբալի է:

Արմաշու «Յոյս»ի համար ես այս անգամ գրեցի Պատրիարք սրբազանին, կարող եք իրմեն տեղեկանալ: Դուք միթե չե՞ք կարդար, որ լրագրերեն ոմանք, մանավանդ «Անահիտ»¹⁰, որպիսի անպատկառ հարձակումներ կանեն մեր եկեղեցականաց նվիրական պաշտամանց դեմ¹¹: Մեր կողմեն ոչինչ պատասխան գրող չկա. պաշտպանությունը «Բազմավեպ»ին¹² մնացած է: Կարդա սեպտեմբեր ամսաթիվն¹³: Եթե Երուսաղեմի «Սիոն» և Արմաշու ամսագրեր հրապարակվեին, որչափ զորավոր թումբ կլինեին այդ կործանիչ հեղեղներուն դեմ: Երբ ես ոչ ձենե և ոչ Երուսաղեմե ոչ մի լուր չստացա մինչև ցայսօր, երկու կես մտածումներ ունեցա. ասի, կամ այն է, որ «Սիոն»ի հրատարակության պատրաստություն կտեսնան, որովհետև գրած եմ՝ նամակի տեղ պետք է «Սիոն» ամսաթերթ ստանամ և կամ մեր այդ հույս ընդունայն լինելով Երուսաղեմի սրբազան Պատրիարք

րոյական իմաստասիրական և բանասիրական»: Լույս է տեսել Նիկոմեդիայի Արմաշի վանքում 1864—1878 թթ., խմբագրությամբ Խորեն վրդ. Աշըգյանի, հետագայում եպիսկոպոս, Կ. Պոլսի հայոց պատրիարք:

¹⁰ «Անահիտ» ամսագիր, Փարիզ, 1898—1911 թթ., խմբագիր-հրատարակիչ Արշակ Չոպանյան:

¹¹ «Անահիտ» հանդեսի 1899 թ. № 9—10-ում վահրամ ստորագրությամբ լույս է տեսնում «Պատրիարք մը, որ կը զբոսնու» հոդվածը, որ քննադատվում է Կ. Պոլսի օրվա Մաղաթիա պատրիարք Օրմանյանը: Ակնարկում է նաև նույն համարում տպված Ա. Չոպանյանի «Ամբոխը» հոդվածը:

¹² «Բազմավեպ» ամսագիր, «Ազգային բանասիրական գրական գիտական ամսաթերթ», հրատարակություն Մխիթարյան Միաբանության:

¹³ Ակնարկում է «Բազմավեպ»-ի 1899 թ. սեպտեմբերին (էջ 434) լույս տեսած հայր Սիմոն Երեմյանի քննադատական հոդվածը Ա. Չոպանյանի «Անահիտ»-ի վերաբերյալ:

և այլ համախոհ Միաբանության եղբարք առ ոչինչ համարել մեր խնդիրք, թողուլ անպատասխան Հայրապետի խնդիր, որ Երուսաղեմի փառաց և հառաջադիմության համար միակ բարեկամն է. թող մեր գրականությունը ևս երթա կորչի, թող մեր կամք լինի. մեք պետք է ազատ լինիմք արտաքին ճնշումների: Բայց արդյո՞ք Հայրիկը կճնշե, թե սիրողաբար կխնդրե. ոչ վասն յուր, այլ հավետ վասն փառաց Ս. Հակոբյան Աթոռուն և սիրելի Միաբանության, որոնք դուք երիցագույն անդամներեն արժանավորն եք: Այս չափ առ այս այժմ բավ է:

Կիլիկիո Կաթողիկոսության խնդրո մասին. ուրախ եմ, որ վերջապես հաջողեցավ բարձրագույն հրաման ստանալ: Այլ ի՞մ ուրախությունն լցյալ կլինի, երբ ընտրությունը արժանավորապես պսակվի Տեր Սահակ սրբազանի ձեռամբ: Վրույրի ձեռքով հողված մի հրատարակած են, կերպով մի պատճառ ցույց կուտան, թե ահավասիկ «Յոյս»-ն ևս դադրած են և այսպես չքմեղս կուզեն լինել: Բայց գիտեք, թե Երուսաղեմ որչափ դյուրություն ունի, քանի որ յուր ձեռքի տակ հարուստ մի տպարան կա: Ձեռնահաս գրողները ևս պակաս չեն Միաբանության դասեն: Երբ Երուսաղեմ Կիլիկիո վիճակին մոտ նորա բերանն է, քանի օգտակար պիտի լինի «Սիոն» այս վիճակին: Ես մի բավական գումար իբրև գրավ պահած եմ և վճարապես գրած եմ Երուսաղեմ, մինչև «Սիոն» թերթ չստանամ, չպիտի դրկեմ այդ գումար: Երեցյան սրբազանին կարդա, նա կպատմե քեզ: Դու գիտես պատեհություն ինձ համար միշտ պատրաստ է: Այդպիսի մի գումար ևս «Յոյս»-ի համար կարող եմ գրավ պահել, մինչև «Յոյս»-ի թերթ ձեռքս հասնի:

Ես հույս ունեմ Ձեր գործունյա ոգու վերա, որ բանը գրավի չես թողուր: Սրտի մտքը կկատարեք Հայրապետին այս անձուկ փափագը: Ինձ միայն մխիթարություն, իսկ քեզ փառք և պատիվ, նմանապես Արմաշու վանից:

Աղոթակից՝ Հայրիկ
ԳԱԹ, Խրիմյանի ֆ., առաջին բ. գ. 11. բնագիր:

№ 4

Մարտի 23, 1899 թ.. Տիփսիս

Քաջաբան ատենախոս Տեր Մամբրե սրբազան¹⁴

Ջրեզ կկացուցանեմ փոխանորդ Հայոց Հայրիկին. մոտ ի դիվան խորհրդարանին

¹⁴ Մամբրե սրբազան—Երուսաղեմի Միաբանության անդամ:

Սրբո Երուսաղեմի: Խոսքը Տեր Մամբրե սրբազանին է հրամանով Հայոց Հայրապետի, և դու գոչյա գործությամբ և մի խնայեր. բարձրացրու իբրև փողս զբարբառ քո:

— Ահա քո բնաբան. «Վասն Սիոն»-ի ոչ լուցից և վասն Երուսաղեմի ոչ ներեցից»: Այնուհետև դու շարե, փաստաբանե վասն «Սիոն»-ի կրկնակի հրատարակության: Եթե մեռյալ և թաղյալ «Սիոն» հրաման տար, որ զվեմն ի բաց առնուն, դու հայն ժամ գոչյա բարձրաբարբառ. «Արի՛, եկ արտաքս ով «Սիոն», հերիք եղև քեզ ճնշել ի տապանիդ անխոս, անբարբառ», դու լոռ, բավ է այդչափ:

Խոսք Տեր Հարություն Պատրիարքին է: — Է՛, Տեր Մամբրե սրբազան, ո՞ւր եմ քեզ զայդ համարձակություն, որ այդպես խիզախ ճոռոմաբանես. հազիվ այդ փորձանք «Սիոն» թաղած եմք, դու զայն կորկին ի դուրս կհանես: Դու չես ճանաչեր ժամանակ և փորձանք յուր, թող այդ «ի կալո՞ւ թե ի հնձանե՞» է, հայր Ղևոնդ, հաշիվ ցույց տուր, մեր Միաբանություն միայն առանց հաշվի ուտել գիտե, ահագին պարտք ուղտի չափ հեծեր է վզիս վերա, ես տակ կճմվիմ, «Սիոն»-ի այդ քեռն էլ կհավելուք վերա: Էդ անհաշիվ մարդ Հայրիկ է, ինչ է, նստեր է հԱրարատ, խոսում է Երուսաղեմ. նա ինչ իշխանություն ունի փոխանորդ կարգելու, հրաման արձակելու և մինչև անգամ մեր հազար ոտքի իբրև գրավ պահելու: Հայոց Հայրապետ գուցե կարծում է Երուսաղեմի մեջն ևս իշխել: Նա դեռ երեկ աքսոր¹⁵ էր այստեղ և ես զինքը փակեք էի Մակարա խուցին մեջ, որչափ հեզ, խոնարհ էր իր անձկության մեջ, այժմ գիտես, թե առյուծ է դարձեր գառագեղեն դուրս ելած: Դա գուցե ձայն տա Արարատ-

¹⁵ Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյանը Կ. Պոլսի Կրոնական ժողովի ատենապետն էր: Գում-Գափուի 1890 թ. հայտնի ցույցից հետո բարձրաստիճան հոգևորականներից կազմված այս ժողովը Բարձրագույն Դուռ է ներկայացնում մի տեղեկագիր, պահանջելով Խորեն պատրիարք Աշրգյանի պաշտոնակցությունը և Կ. Պոլսում հակողության տակ գտնվող առաջնորդների վերադարձը հայ գավառներ: Այդ տեղեկագիրը կազմում և ստորագրում են Կրոնական ժողովի 9 անդամներից չորսը՝ Մկրտիչ Խրիմյանը, Մատթեոս Իզմիրլյանը, Գրիգորիս Ալեաթճյանը և Գարեգին Սրվանձությանը: Այդ հանդրգնության համար չորս նշանավոր հայ հոգևորականները պատժվում են կառավարության կողմից: 1890 թ. դեկտեմբեր ամսին Խրիմյանը աքսորվում է Երուսաղեմ, ուր մնում է մինչև իր կաթողիկոս ընտրվելը (1892 թ.), «Արծիվը փակվել էր ճնշողական վանդակի մեջ»:

յան Ասքանազյան գնդին և պատերազմ հրատարակե. հե՛, մի՞թե ես կլռեմ, ես էլ ձայն կուտամ բովանդակ մեր աշխարհին Ֆելլահյան գնդերուն և արշավանք կբառնամ Սիոնի լեռներեն մինչև ի Մասիս: Էդ ուշամոռաց մարդ միթե մոռցեր է մեր ներսի դուրսի¹⁶ կոնվը, գոր մղեցինք պոլսեցվոց դեմ և հաղթանակ տարինք:

Խոսք Սահակ սրբազանին է. — Սրբազան Տեր, մի այդչափ նեղանաք, ես էնպես համոզված եմ, որ Հայրիկ տիրապետելու հոգի չունի. նա Էջմիածնա Միաբանություն չէ կարող տիրապետել, ուր մնաց Երուսաղեմի, նորա միտքն այն է, որ մեր Միաբանությունը որչափ կարելի է ազգի լուսավորության ու կրթության համար ևս ծառայե: «Սիոն»ի հրատարակության համար ոչինչ դժվարություն չկա, քանի որ մեր մատենադարան շատ նյութ կընձեռնե մեզ. չեն պակաս նաև մեր Միաբանական դասուն մեջ բավական գրողներ, մանավանդ երբ նյութականի մասին Հայրիկն ինք կապահովե:

Խոսք Տեր Ներսես եպիսկոպոսին է. — Սուրբ Պատրիարք Հայր, ես Ձեր կարծիքին համաձայն եմ. մեր Սահակ եպիսկոպոս եղբայր միայն մոմ վառել գիտե, պատրաստել չգիտե: Ինձ էնպես կթվի, որ նա իր հանցանք ծածկել կուզե. դա չէ՞ր, որ գնաց Էջմիածին, քվե տվավ այդ անփորձ մարդուն, որ այժմ մեր գլխուն փորձանք եղած է: Ձեզ ամենուդ հայտնի է: Ծանչնանք ժամանակ, ուխտավորներ պակասած են. ա՛հ, ուտող չգիտեր, բրդող գիտե. դուք չգիտեք ես ինչ տանջանք կբաշեմ. երկինք, գետին, Սուրբ Գիրք, սուրբ տեղեր, արքայություն,

¹⁶ Ներսի ու դրսի կոնվ ասելով նկատի ունի այն պայքարը, որ ծավալվեց 60-ական թվականներին Երուսաղեմի պատրիարքի ընտրության շուրջը: 1860 թ. դեկտեմբերին հանկարծամահ եղավ Երուսաղեմի Հովհաննես Զմյուռնացի պատրիարքը: Կ. Պոլսի պատրիարքարանը Ազգային Սահմանադրության օրենքի վրա որոշեց պատրիարքի թեկնածությունն առաջադրել «դրսից», այսինքն Միաբանության անդամներից դուրս մեկին: Սակայն Երուսաղեմի Միաբանության անդամների մի մասը նոր պատրիարքի թեկնածությունն առաջադրում էին ներսից՝ թուրքահայտակ եպիսկոպոսներից: «Ներսեն» և «դուրսեն» խմբակցությունների պայքարը փաստորեն պայքար էր Ազգային Սահմանադրության հակառակորդների և կողմնակիցների միջև, «վասնզի այսօր ամեն ողջամիտ հայ կոտեսնե, թե Երուսաղեմի պատրիարքը մեջեն ըլլա, դուրսեն ըլլա, կոնվներու ներքին նպատակը Սահմանադրության կործանումն է» («Մեղու», 1861 թ. 26-ը հուլիսի):

դժոխք, իրար խառնելով մի ուխտավորի համար հազար հազար բառ կարտասանեմ, հազիվ այդ ուխտավոր խեղճ կիներուն քորձերուն մեջ հանգուցած դրամի կապոցներ կբալեմ, դարպաս տուրք կհանեմ. ո՛չ, ո՛չ ես համաձայն չեմ «Սիոն»ի ապարդյուն հրատարակության, թե ոչ ես հրաժարելով հրաժարում եմ դարպասչության Էդ ծանրատաղտուկ պաշտոնեն, որ հոգիս բերանս է բերեր, աշխատությունս վանուց համար է, բայց կբամբասվիմ իբրև անգութ, խրատապահանջ մարդ:

Խոսք Անդրեաս վարդապետին է. — Ես չոքեչոք գալով ձեռներդ ոտներդ կհամբուրեմ, սրբազան հայր մեր. զիս ազատե իմ սիրելի բարեկամացս ձեռքեն. անուններ չեմ ի տար, դուք լավ գիտեք, դոքա պարապմունք չունին, գործ չունին, անկյան, անպան կթափին վրաս. դոքա իմ ընտանի անգեն քաղցր ավազակներն են. ամեն օր արշավանք և կողոպտումն կրում եմ. եթե այսօր լեցնեմ սենյակս, վաղը կպարպվի, չէ որ այդ ամեն պարապության հետևանքն են: Աստծո սիրուն լինի, սրբազան տեր, թույլ տուր, որ «Սիոն» հրատարակվի. թերևս ասոնք գրականությամբ պարապին և ես ազատվիմ, ապա թե ոչ այժմեն խոսիմ քեզ, տեր հոգևոր, իմ կարծված հարստությունը բոլորը կուտեն այդ ընտանի բարեկամները և ոչինչ ժառանգություն չի մնար վանուց. թող գիտնա բոլոր Միաբանություն, թե այս այսպես է և դուք գիտեք, որ շատ անկեղծ մարդ եմ, սիրտս և լեզուս նույնն է:

Խոսք Հայոց Հայրիկին է. — Ա՛ն, տեր Մամբրե սրբազան, ա՛ն այս հինգ հարյուր ութիկն, տուր այժմ Տեր Հարություն սրբազանին, հայտարարե բարձրաձայն, որ մի բարեպաշտ անձն նվիրած է «Սիոն»ին հրատարակության համար և խոստանում է տարվե տարի վճարել նույն գումարը:

Վերջաբան Հարություն սրբազանին է. — Ապրիս, Տեր Մամբրե սրբազան, տեսար մի գործնական բան. ամեն գործ պետք է այսպես վճարել. օդին մեջ երևակայությամբ աշտարակ չի շինվիր. կերևի, որ այդ երևակայող Հայրիկ վերջիվերջո համոզված է, որ լոկ խոսքով փիլավ չի եփվիր: Գոչենք, ուրեմն, կեցցե Հայոց Հայրիկ, բարեկամ Երուսաղեմին, աղոթենք նորա կենաց համար, որ մնա այսպես մինչև ցմահ և այսյուր սուրբ ուխտն է, վկա Ավետյաց երկրի հրավիրակն է¹⁷: Է՛, լսեցեք եղբարք, այս շնորհ միայն Խրիմյանին չէ, կեցցե և ավելի

¹⁷ Ակնարկում է Խրիմյանի «Հրավիրակ Երկրին Ավետյաց» աշխատությունը, որը լույս տեսավ Կ. Պոլսում 1851 թ.:

ևս կեցցե Տեր Հարություն սրբազան, որ քաշելով քաշկրտելով բան բերավ մինչև այստեղ, կեցցե ուրեմն նաև գործնական հառաջադիմություն և նախահաշիվ տնտեսություն: Օ՛հ, կանչեցեք գավազ, թող կառք պատրաստե, հիմա կերթամ փաշային արտոնություն կառնեմ և «Սիոն» առք փառք կհրատարակվի: Աստվան փակված է, հայտե՛, հայր Անդրեասին սենյակ, խմենք, ուրախ լինենք և օրհնենք Հայրիկի կյանքը:

Հրահանգ, հարկ չէ կարդաս այս մասը.— Ձեզ կթողում, հայր Մամբրե, որ Սահակ եպիսկոպոսին և հայր Ղևոնդին հետ խորհրդակցելով մեր այս նամակի ընթերցումն փոքր ինչ հանդիսապես լինի, հրավիրելով Միաբանական դասեն մի քանի կարևոր եղբայրներ և դուք պետք է հայտարարեք կանխավ, թե Հայրիկեն մի կարևոր թուղթ կա, պիտի կարդամ և այլն: Բայց չմոռանաք հայր Ղևոնդեն հինգ հարյուր ոտքի կանխապես առնելով Ձեր քով պատրաստ լինի, որ այն վերջին կետին դնեք պատրիարքին ձեռք, այս է միայն, որ հաստատում է նորա գործնական հավատքը:

Վա՛յ Հայրիկի բախտին, որ թափեց աչքի լույս և գրեց այս նամակ յուր անչափ զբաղանաց մեջ. եթե տակավին չհաջողի բան և դու գիտես զքեզ և երեքին բարեկամներիդ պատասխանատու կհանաչեմ:

ԳԱԹ, Մ. Խրիմյանի ֆ., առաջին բ. գ. 68, բնագիր:

№ 5

28 դեկտեմբերի 1899 թ.

**Ազնիվ օրհորդ Եվգինե Օտյան,¹⁸
Ողջուն Ձեզ**

Նոր թարգմանած երեք հատոր գրքերդ ստացա, առ այս շնորհակալություն Ձեզ. կհուսամ այլևս պիտի պարապեք նորանոր թարգմանությամբ, վասնզի անչափ գովեստ խրախույս ձրի չեն: Այս գիրք, որ Սիրտ¹⁹ անուն կկրե, տասնհինգ տարի ա-

ռաջ Փիլիպոս Վարդանյան²⁰ թարգմանած է, այս անձ, որ Սանասարյանի հին աշակերտներեն է, իբրև հաջող թարգմանիչ հոչակ ունի: Երբոր Տփլիս գամ, պիտի խրկեմ. կարդացեք և բաղդադեցեք:

Չգիտեմ, կապասես, որ Հայրիկն ևս քո գրքիդ մեծ գովեստ տա գիտնալով, որ ես վեպերու շատ ճաշակ չունիմ, սակայն Ձեր այդ աշխատությունը դպրոցական մանուկներու համար կրթության մի գեղեցիկ նկարագիր է: Բայց դու ուշ դիր, մի խուսափիր Հայրիկի մեղմիկ դիտողությունեն, եթե ասեմ, այդ գիրք գաղիացի է, հայ չէ, այնպես էլ պիտի լինի, որովհետև գրողն գաղիացի է, բայց թարգմանիչն պիտի հայու հարազատ գավակ է: Ինչու ասի գիրք գաղիացի է, որովհետև երկիրն օտար է, երկրին հանգամանքներ օտար, վարժապետն օտար, վարժուհին օտար, աշակերտուհիներն օտար, քաղաքավարության ձևերն օտար. գործրինակ դասարանի մեջ համբույրներ խրկել իրարու ձեռքի շարժման նշաններով. պիտի զարմանաս այս դիտողությանց վրա և ասես, թե Հայրիկի նկատողություններ իրավացի չեն. միթե կարելի չէ թարգմանչին թողլով թարգմանության ճշտություն, գիրք ամբողջովին մկրտել, այսինքն թե գաղիացի է, հայ դարձնել:

Բայց՝ դուք իմ դիտողության առ երեվույթ մի նայեք, այլ հոգին ըմբռնեք. իմ ցանկությունն այն է, որ հայ մանուկներու ընթերցասիրության գիրք հայ լինի յուր ամեն մասերով որպեսզի ազգային և ընտանեկան լինելով, մանուկներ դյուրությամբ ըմբռնեն և հաճությամբ կարդան. եթե թարգմանած գիրք իր նպատակին չձառայի, պետք է ուրեմն հեղինակություն լինի: Եթե ասեք այնչափ թարգմանված վեպեր, թարգմանություններ կան նշանավոր հեղինակներու օտար լեզուներե. միթե հայոց համար օգտակար չէ. երբ հայոց գրականությունն այնչափ աղքատ է և կարոտ է միշտ թարգմանությամբ հարստացնել յուր մատենական թանգարան: Բայց գիտեք, այլ է փոքր ի շատե զարգացած ժողովրդի համար գիրք, այլ է մանուկներու ընթերցանության գիրք,

¹⁸ Եվգինե Օտյան, արևմտահայ թարգմանչուհի, ազգային նշանավոր գործիչ Գրիգոր Օտյանի քույրը, ի թիվս այլ երկերի, թարգմանել է նաև Լ. Հալեվի «Աբբա Քոնսթանթին» վեպը, որի առաջաբանը գրել է Գր. Օտյանը:

¹⁹ Ակնարկում է իտալացի գրող Էդմոնդո դե Ամիչիսի (1846—1908 թթ.) «Սիրտ» վեպը՝ գրված 1866 թ.: Խրիմյանը նամակում սխալմամբ նրան համարում է գաղիացի (ֆրանսիացի) գրող:

²⁰ Փիլիպոս Վարդանյան (1842—1917), ուսուցիչ, հասարակական գործիչ, թարգմանիչ: 1881-ից դասավանդում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ընդհանուր պատմություն, դուս գրականություն և գերմաներեն: 1888-ին ստանձնում է Թիֆլիսի Մարիամյան-Հովհաննյան դպրոցի տեսչի պաշտոնը: 1896-ին հայկական դպրոցները փակվելուց հետո մնում է առանց աշխատանքի: Թարգմանել է Ծմիդոսից, Հոմերոսից, Սմայլսից, Էդ. դե Ամիչիսից, Ծիլերից և ուրիշներից:

որ շատ խնամով պետք է պատրաստվի և այս դյուրին բան չէ, զի Ձեր շնորհք թարգմանությունն միթե բավական չէ:

Հայրիկ որ զգայուն ունի սրտով, կարդաց քո գրական սիրտ. օրական խրատներ թղթատեցի. բայց Մարգոն կարդացի ու կարդացի. ազդեց սրտիս վրա այն ծնողասեր մայրասեր Մարգոն, որոն կարագիր մի ճշգրտական պատկեր է ծնողասիրության. այդ հատված միայն արժե ամբողջ գիրք:

Կքաջալերեմ զՁեզ, շարունակեցեք Ձեր թարգմանության պարասմունքներ, որ Ձեզ համար շատ քաղցր աշխատություն է, միայն մեծ խնամք տարեք, մի շլակեք, այս մասին եթե ժամանակ ունենամ, ուրիշ անգամ կգրեմ Ձեզ:

Կխոստանամ օգնել Ձեզ, եթե ընտանեկան կրթության մի ընտրելագույն գիրք թարգմանեք. կանխավ այդ թարգմանելի գրքին ցանկ կարող եք դրել մեզ:

Ողջունեցեք Օտյան գերդաստանի ամբողջ մնացորդներուն:

Խրիմյան Հայրիկ

ԳԱԹ, Մ. Խրիմյանի ֆ., առաջին բ. գ. 94, բնագիր:

№ 6

Մայիսի 2, անտարերթիվ
Նոր Նախիջևան

Արժանապատիվ Տեր Գյուտ քահանա²¹,
սիրելի մեր.

Դուք արտոնություն խնդրում եք մեզ-

²¹ Նկատի ունի Գյուտ ավագ քահանա Աղանյանցին (1856—1920), պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ, թարգմանիչ: Գյուտ քահանա Աղանյանցը նշանավոր է 13 հատորներով հրատարակած իր «Դիվան հայոց պատմության» ժողովածուներով, որտեղ ամփոփված են Կ. Պոլսի պատրիարքարանի, կաթողիկոսական դիվանի բազմաթիվ վավերագրեր, որոնք լույս են սփռում հայ ժողովրդի 18-րդ և 19-րդ դարերի պատմության վրա:

մե հանգուցյալ Սրվանձությանցի²² գրական գործերը կրկին տպագրելու համար: Այդ գործը ոչ միայն ինձ ցանկալի է, այլ և ամեն գրասիրաց. այլ չգիտեմ միթե Ռուսաստանի մեջ պակասած և հազվագյուտ եղած են նորա առաջին տպագրված գործեր. գիտեմ, որ ի Պոլիս շատ հազվագյուտ եղած է, կփնտրեն: Ուստի թույլ կուտամ Ձեզ տրպագրել դոցա, միայն թե կանխապես պատրաստեք նորա ծրագիր, թե ինչ կարգով պետք է տպագրեք:

Գիտեք, Տարոնի Արծվիկին²³ մեջ շատ նշանավոր հատվածներ կան, որք նկարագիր են այն ժամանակի հարստահարությանց: Գրե հայր Մկրյանցին²⁴, թե կարող է ձեռք բերել: Ներփակյալ նամակներ հասուցեք առ տիկին Մարիամ իշխանուհի Թումանյան և առ այլսն:

Աղոթակից Ձեզ՝ Հայրիկ

ԳԱԹ, Գ. Աղանյանի ֆ., գ. 553, բնագիր:

²² Խոսքը վերաբերվում է հայ բանահյուսության մեծ երախտավոր, բանագետ, ազգագրագետ, մանկավարժ, Մ. Խրիմյանի մերձավորագույն զինակից ու սան Գարեգին եպիսկոպոս Սրվանձությանցին (1840—1892) և նրա ժողովածուներին՝ «Գրոց-Բրոց», «Հնոց-Նորոց», «Մանանա», «Համով-Հոտով» և այլն:

²³ Նկատի ունի Արևմտյան Հայաստանի Ս. Կարապետ վանքում Գարեգին եպիսկոպոս Սրվանձությանցի խմբագրությամբ 1863—1865 թթ. հրատարակված երկշաբաթաթերթը՝ «Լրատար Արծվիկ Տարոն»-ն:

²⁴ Հովհաննես ավագ քահանա Մկրյան, մշակութային և հասարակական գործիչ, երկար ժամանակ եղել է Կ. Պոլսի Ներսես պատրիարք Վարժապետյանի փոխանորդը:

